Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«03» ԱՊՐԻԼԻ 2014 Թ. N 14-Ա ՀՐԱՄԱՆԻՑ

ԱՐՍԵՆ ԽՇՏՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետ Հ. Հարությունյանի միջնորդությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Արսեն Վանիկի Խշտոյանին 2014 թվականի ապրիլի 4-ից փոխադրման կարգով նշանակել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի պետի պաշտոնում, ազատելով նրան Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկի պետի պաշտոնից:

Աշխատավարձը՝ ըստ հաստիքային ցուցակի:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետ Հ. Հարությունյանին՝

- սույն հրամանի 1-ին կետով պայմանավորված՝ կազմակերպել հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Սևան» և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում:

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ